ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2025 թվականի № 321-Ա

ՏԱԹԵՎԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի № 535-Ա որոշումը և *Տաթևիկ Սողոմոնյանի*՝ 2025 թվականի հունիսի 23-ի № 81 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գետարգելի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Տաթևիկ Սողոմոնյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ 12 աշխատանքային օր՝ 2025 թվականի օգոստոսի 18-ից սեպտեմբերի 2-ը ներառյալ:

2. ***Տաթևիկ Սողոմոնյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գետարգելի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Դիանա Աղասարյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 7
ք. Հրազդան